ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

VII Բ դասարանի նախագծային ուսուցման

Ուսուցչուհի՝ Շահանե Հարությունյան

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII Բ դասարանի աշակերտների հետ՝

1. Հովհաննիսյան Էլինար
2. Կարապետյան Կարինե
3. Հայրապետյան Ալվարդ
4. Դավթյան Միլենայ
5. Գալստյան Գոռ
6. Բաղդասարյան Աշոտ
7. Կարապետյան Լևոն
8. Գրիգորյան Էդուարդ
9. Տիգրանյան Դավիթ
10. Միքայելյան Էրիկ
11. Գինոսյան Մարատ
12. Համբարձումյան Սոնա

նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ նախագծային ուսուցում «Արտաշես Ա-ի բարենորոգումները» թեմայով: Մեր նպատակն էր ծանոթանալ Արտաշեսյան թագավորության կառավարման համակարգին,վերլուծել Արտաշես Ա-ի թագավորությունում տեղի ունեցած բարեփոխումները, ուսումնասիրել Արտաշեսյան թագավորության քաղաքակրթական ժառանգության դերը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում: Նախագիծն իրականացնելու համար նախատեսված էր 6 շաբաթ:Աշխատանքը սկսելու համար նախ անհրաժեշտ էր ծանոթանալ Արտաշեսյան թագավորությանը: Սովորողները տեղեկություններ են հավաքել Արտաշես Ա արքայի և արքայատոհմի մյուս արքաների մասին:Դիտել են կարճ տեսանյութեր թեմայի վերաբերյալ:Այնուհետև սովորողներին բաժանել եմ 4խմբի,յուրաքանչյուր խմբում 3 հոգի և տվել հստակ հրահանգ՝ ուսումնասիրել Արտաշես Ա-ի բարենորոգումները:Խմբերը պետք է կազմեին Արտաշես Ա-ի հրովարտակների կետերը՝ մինչև 10 կետ: : Ակտիվ հետազոտական և պրպտողական գործունեության ընթացքում սովորողները հավաքեցին մեծ քանակությամբ տեսական տեղեկություններ թեմայի վերաբերյալ :Մեր ուսումնասիրության հիմքը Պատմահայր Խորենացու Հայոց պատմություն աշխատությունն էր:

Անհրաժեշտություն առաջացավ այցելելու Պատմության թանգարան, որտեղ սովորողները տեսան Արտաշես Ա-ի կողմից հողային բարեփոխման խոսուն վկա սահմանաքարերը: Արտաշատ մայրաքաղաքի մանրակերտը,Արտաշեսյանների ժամանակաշրջանի շատ գտածոներ:Օրը հագեցած էր և տպավորություններով լի:Սովորողների մոտ անասելի մեծ էր ցանկությունը զրուցելու որևէ կառույցի ղեկավարի հետ:

Հանդիպում եմ կազմակերպել մեր դպրոցի տնօրեն տիկին Հարությունյանի հետ: Փաստեմ,որ շատ հաճելի զրույց ստացվեց անկաշկանդ մթնոլորտում: Տիկին Հարությունյանի հետ սովորողները քննարկեցին իրենց անելիքները, ծանոթացան դպրոցում գործածության մեջ դրված հրամանագրերին և փորձեցին զուգահեռ տանել Արտաշես Ա-ի կողմից ստեղծված հրամանագրքի հետ: Եվ նախապատրաստվեցին

նախագծի վերջնարդյունքի ստացմանը՝ ստեղծել Արտաշես Ա-ի հրամանագիրքը: Սովորողները իրենց ստեղծագործ մտքի շնորհիվ ստացան կերպարները՝ ուշադրություն դարձնելով հագուստներին,դետալներին և փոքրիկ դերային խաղով փորձեցին ներկայացնել վերջնարդյունքը:Նախագիծը ներկայացնելիս սովորողները կիրառեցին «Աշխարհացույց» կրթական հարթակը: Նախագծի արդյունքում սովորողները ստեղծեցին Արտաշես Ա-ի սահմանաքարի նմանօրինակը և վերականգնեցին Ուժի և գեղեցկության արքայի հրամանագիրքը: Նախագծային աշխատանքը ներկայացնելուց հետո ծավալվեց քննարկում,որի ընթացքում ուսուցիչների և աշակերտների կողմից հնչեցին հետաքրքիր առաջարկներ և գնահատականներ կատարված աշխատանքի վերաբերյալ: **Շնորհակալություն**